

1905. Թ Ո Ւ Ա Կ Ա Ն Ը

Վերջապէս անցաւ արիւնոտ 1905 թուականը, որը մի քառս էր յուսոյ և յուսախաբուծեան, լուսոյ և խաւարի, սիրոյ և ատելութեան, բռնութեան և ազատութեան, պարտութեան և յաղթութեան, խաղաղութեան և խռովութեան, արեան ու մտրակի, ազատութեան արշարուսի և կոտորածների սարսափի, մարդկանց ամենաազնիւ ձգտումների և ամենավայրագ ինստինքտների արտայայտութեան: Այն, կատարեալ քառս, երբ ամեն ոք ապրում էր բոլոր ջղերը լարած՝ կատարեալ անորոշութեան — անյայտութեան մէջ և չը գիտէր, թէ ինչ կը բերի վաղուան օրը: 1905-ի յունվարը սկսուեց փոթորկով, ջրօրհնէքին, երբ Պետրօպաւլովսկի ամրոցից ողջոյնի թընդանօթներ էին պարպում, յանկարծ մինից արձակուեց վարժութեանց ժամանակից մնացած ուսմբը և կպաւ ձմեռային պալատին, վերաւորելով մի քանի հոգի:

Այնուհետև յունվարի 9-ին Պետերբուրգի բանւորները ցանկացան ներկայանալ իրենց թագաւորին և ներկայացնել իրենց պահանջ — խնդրագիրը երկրի և աշխատաւոր դասակարգերի կարիքների մասին: Հաւաքուել էր հարիւր հազարից աւելի անդէն բազմութիւն, որը հաւատով և սքեռութեամբ դիմում էր դէպի պալատ՝ տեսնելու երկրի բարեխնամ Հօրը:

Յանկարծ այդ խաղաղ ժողովրդին դիմաւորեցին հրագէշներով և գնդացիներով (պուլէմեռաներով) և սկսան կոտորել առանց խտրութիւն դնելու կնոջը և մարդու, պատանու և մանկան մէջ: Ականատեսները պատմում են, որ Ամառային այգու ծառերից հանդիսատես մանուկներին որսում էին ճնճղուկների նման և նրանց անմեղ արիւնով վարդագոյն էր ներկում սպիտակ ձիւնը: Ո՞վ տուեց այդ կոտորածի հրամանը, ո՞վ էր այդ անզուգական դահիճ հերոսը, դեռ յայտնի չէ և հարիւրաւոր անմեղ

զոհերի արիւնը զուր է վրէժ խնդրում երկնքից:

Բայց այդ օրերին էր, որ Պետերբուրգ հրաւիրուեց ամենակարող Տրէպովը (եթէ թարգմանելու լինենք՝ ջախջախեանը), ջախջախելու ուստի ժողովրդի արթնացած խիղճն ու միտքը և նրան յիշկրկին խօսումն անասունի վերածելու: Այդ բանի համար նրան տրուեցին արտակարգ լիազօրութիւններ և իրաւունքներ, նրան ստորագրեցին ամբողջ երկրի ոստիկանութիւնը, Պետերբուրգի պահակազօրքը և նա գործի սկսաւ:

Յունվարի 18-ին իւր խնդրանաց համաձայն ներքին գործոց նախարի պաշտօնից արձակուեց Սվետապօլկ—Միրսկին և տեղը նշանակուեց Մոսկվայի գեներալ Նահանգապետի օգնական Հօֆմէյստեր Բուլլիգինը. յունվարի 14-ին փոխուեց արգարադատութեան նախարար Մուրաւեօվը և նշանակուեց Հոովմի դեսպան, փոխուեցին ելեւտից նախարարն ու ուրիշները, նշանակուեցին զանազան մասնատոմսեր գրաքննական օրէնքների փոփոխութեան, գիւղացւոց վիճակի բարելաւութեան, բանւորական դասակարգի դժգոհութեան պատճառները պարզելու. լուսաւորութեան նախարարութեան կողմից առաջարկուեց ուսուցչապետներից առանձին խորհուրդներ կազմել բարձրագոյն դպրոցներին կից՝ քննելու, թէ արդեօք ինչ միջոցներով հնարաւոր պէտք է լինէր պարապմունքներ վերսկսելը: Փետրվարի 4-ին պայթուցիկ ոււմբով սպանեցին Մոսկվայի կրեմլում Մեծ Իշխան Սերգէի Ալէքսանդրովիչին՝ Մոսկվայի գեներալ Նահանգապետին, փետրվարի 8-ին որոշուեց ազատութիւն տալ բոլոր հնածէս ազանդներին և ազատել հնածէսների արքեպիսկոպոս Իօանին: Փետրվարի 6-ից երեք օր շարունակ տեղական նահանգապետի և ոստիկանական ու զինուորական իշխանութեանդ աչքի առաջ կատարուեց Բաքուի հայոց կոտորածը, որի պատճառով ծերունի և հիւանդ Հայրապետը Թիֆլիզ հրաւիրուեց իւր բազմատանջ հօտի խաղաղ կացութեան համար միջոցներ խորհելու: Բաքու ուղարկուեցին Յուսիկ եպիսկոպոսն ու Մխիթար վարդապետը, որոնք

տեղական առաջնորդի և վարդապետների ու աշխարհականների հետ պէտք է աշխատէին քաղաքը խաղաղացնելու ֆետրվարի 9-ին Վարչաւայի դպրոցական հոգաբարձուն փակեց քաղաքի բոլոր միջնակարգ դպրոցները՝ բացի երկու գիմնադիօններից, որոնց աշակերտները գլխաւորապէս ուսւ էին:

Փետրվարի 18-ին հրատարակուեց Բարձրագոյն հրովարտակ, որով ժողովրդի ընտրեալ ներկայացուցիչներին իրաւունք էր տրուում մասնակցելու Պետական օրէնսդրական դործունէութեան՝ խորհրդակցական ձայնով և ընտրութեանց եղանակի ու ձայնի իրաւունքի, ընտրելիների թուի և առհասարակ Պետական խորհրդի վերաբերեալ խնդիրների մշակութեան համար կազմուեց մի մասնաժողով ներքին գործոց նախարար Բուլիգինի նախագահութեամբ, որ և սկսեց տշխատանքները բաւական դանդաղ: Նորին Վեհափառութեան ամենայն հայոց կաթողիկոսի կողմից Պետերբուրգ ուղարկուեցին Բեսսարաբիոյ առաջնորդ գեր. Տէր Ներսէս արքեպիսկոպոսն ու Մեսրոպ վարդապետը, որոնց և յանձնարարուեց դեկտ. 12-ին հրատարակած Բարձրագոյն հրամանի համաձայն աշխատելու կալուածական և դպրոցական խնդիրների համար, որոնք ամբողջովին կլանել էին հայ ժողովրդի եռանդն ու ուշադրութիւնը և դրել նրան այնպիսի պայմանների մէջ, որոնք չէին կարող նրա մտաւոր և բարոյական պահանջներին բաւարարութիւն տալ: Մինչդեռ գահոյքի բարձրութիւնից ժողովրդին նորանոր խոստումներին էին տրուում խաղաղացնելու նրա ամենախաւար խաւերում լեռնացող ալիքները, միւս կողմից պահպանողական մամուլը և բիւրօկրատիան յուսահատ փորձեր էին անում կանգնեցնելու սկսուող փոթորիկը և նորից յայտարարելու, որ ամեն ինչ խաղաղ է: «Московскія Вѣдомости» պահպանողական թուրաւոր թերթը պարզ կերպով կոչ կարդաց կարգապահութեան կողմնակիցներին սաքի կանգնելու, որովհետեւ հասած էր համարում ժամանակը: Իսկ զանազան քաղաքներում սկսան կազմակերպուել սե հարիւրակներ և

լոյս տեսան բազմաթիւ կոչեր, որոնց հետեանքն եղաւ հրէաների, ուսանողների և միջնակարգ դպրոցների աշակերտների և աշակերտուհիների կոտորածները: Այդ բանին ըիչ չը նպաստեց և հոգևորականների բացասական գործունէութիւնը, որոնք տգէտ ամբօխին բանւորների և ինտէլիգէնցիայի դէմ գրգռելու նպատակաւ սուտ լուրեր տարածեցին թէ նրանք եապոնացիներից կաշառուել են: Փետրվարին կայսրը բարեհաճեց ընդունել բանւորական պատգամաւորներին, լսեց նրանց պահանջները և միութարեց յունվարի գէպքերի առթիւ: Այդ նոյն ամսին դադարեց Շիդլովսկու մասնաժողովը առանց գործի սկսելու, որովհետև բանւորները չը համաձայնուեցին ներկայացուցիչներ ուղարկել ծրագրած աշխատանքներին մասնակցելու: Դպրոցական կեանքն ու գործունէութիւնը բոլորովին դադարեց, այնպէս որ նոյն իսկ «Նովոյէ Վրեմիա» թերթը գտնոււմ էր, որ «Լուսաւորութեան նախարարութիւնը վերացրած ի նման է»:

Ամբողջ մի տարի ուրբան էլ աշխատեց բիւրօկրատիան և ուսւ հոգևորականութիւնը ազգային-կրօնական գոյն տալ ուսւ-ճապոնական պատերազմին, այդ նրան ոչ մի կերպ չը յաջողուեց և զօրքը դգաց, որ ինքը զոհ է բերւում անձանօթ օտար երկրում մի միայն մի քանի բազմաթիւներն էր կամայականութեան. չը կարողացաւ տանել աննկարագրելի զրկանքները Մանջուրիայի ցուրտ դաշտերում այն ժամանակ, երբ զօրապետների կովերի համար յատուկ գնացք էին ուղարկոււմ և ճանապարհները միակոււմ (Շտակելբերգիկովերը), — Մուկգէնի ճակատամարտի ժամանակ մեծ թուով վայր թափեց զէնքերը և բարւոք համարեց գերի գնալ, քան կուուել հայրենասպան բիւրօկրատների անցատակ գրպանների և արիւնածարաւ որկորների համար: Մուկգէնի ճակատամարտով վերջացաւ ցամաքային պատերազմը և եապոնացիք մի միայն Սախալինի նուաճման ետեից ընկան: Փետրվարի 27-ին Բարձրագոյն հրովարտակով վերջացաւ կովկասեան կառավարչապետութիւնը, — վերահաստատուեց փոխարքայութիւնը և կովկասի

Փոխարքայ նշանակուեց գեներալ ազիւտանտ Կոմս Վա-
րանցով-Դաշկովը: Մարտի 3-ին փոխուեց զօրաց ընդհա-
նուր հրամանատարը և նշանակուեց այդ պաշտօնում
Լինսկչը:

Ապրիլի 17-ին յայտարարուեց խղճի ազատութիւնը, —
ոչնչացուեցին այլադաւան եկեղեցիների կառուցման դէմ
եղած ձեւականութիւնն ու արգելքները և իրաւունք
տրուեց բոլոր դպրոցների այլադաւան աշակերտներին
կրօնն աւանդել իրենց մայրենի լեզուով: Այդ հրովար-
տակով բռնի կրօնափոխութեանը, որ մեր երկրում Գո-
լիցինի ժամանակ Ռուսաստանն ուժեղացնելու միջոցներից
մէկն էր համարոււմ, վերջ դրուեց և խառն ամուսնու-
թեանց պարտադիր յունադաւանութիւնը վերացաւ: Ապ-
րիլին Կովկաս ժամանեց նոր նշանակուած Փոխարքան և
սկսեց երկրի կառավարութիւնը, որի մի մասը՝ Գուրիան
յեղափոխութեան հրդեհով էր բռնուած, Բաքուում սենա-
տորական քննութիւն էր, իսկ Հին Նախիջևանում և դա-
ւառում նորից թուրք-հայկական կոտորած: Մայիսի 14 և
15-ին տեղի ունեցաւ Յուսիմայի ծովային ահեղ ճակա-
տամարտը, որի ժամանակ եապօնացիք ոչնչացրին ռուսա-
կան ամբողջ նաւատորմիցը և մի մասն էլ դերի վերցրին:
Պատերազմը Յուսիմայի ճակատամարտով արդէն վերջա-
ցած էր և բիւրօկրատիային Եալուից, Շախէից, Յինջուից,
Վաֆանգուից, Լիաօեանից, Պօրտ Արտուրից և Մուկ-
դէնից յետոյ, որտեղ Ռուսաստանի տասնեակ հազարաւոր
ընտիր զաւակներ գտան իրենց անժամանակ գերեզմանը,
հարկաւորուեց նորից ժողովրդական դառն քրտինքով
ձեռք բերած և մտրակի հարուածներով հաւաքուած մի-
լիոնների կորուստը և 10—14 հազար նոր զոհեր, որ
համոզուէր՝ թէ կապանքների մէջ մեծացած բազուկները
չեն կարող ազատութեան զաւակներին յաղթել և խա-
ւարի մէջ սնած գլուխներն ու անլեզու բերանները կրթուած
և լուսաւոր գլուխներին դիմանալ: Բիւրօկրատիան, ռուս
զինուորին խաւարի մէջ պահելով, իրօք սովորեցրեց մեռ-
նել, թնդանօթի միս դառնալ, բայց, յաղթել՝ երբէք:

Վերջապէս կարիք զգացուեց խաղաղութեան բանակցութիւնները սկսելու, որի նախաձեռնութիւնը յանձն առաւ Միացեալ Նահանգների նախագահը:

Դեռ յունիսի շոգերին Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռից մեկնեց Թիֆլիզ՝ նախ Կովկասի Փոխարքային բարի դալուստ մաղթելու և երկրորդ կալուածական խնդրի լուծումը կարելի եղածին չափ փութացնելու: Ինչպէս երևում էր, Թիֆլիզում քնած չէին Գալիցիներն ճժերը և հասկանալով, որ Վեհափառի գնալը իրօք կարող է փութացնել կալուածական խնդրի դրական լուծումը, խորհուրդ չէին տալիս յունիսին Թիֆլիզ երթալ՝ արդէն ուշացած համարելով Նորին Սրբութեան այցելութիւնը՝ մանաւանդ որ Կոմս Փոխարքան, նրանց ասելով, պատրաստում էր երեք օրից յետոյ մեկնել հանքային ջրերը: Ծերունի Հայրապետը յուլիսի շոգերին մնաց Թիֆլիզ գործի ելքին սպասելով, վերջապէս օգոստոսի 2-ին հեռագիր ստացուեց, որ Օգոստովառ Կայսրը ամսի 1-ին Բարձրագոյն հրովարտակով հրամայել է վերադարձնել եկեղեցական կալուածներն ու գոյքը և թոյլատրել դպրոցների վերաբացումը 1874 թուի յուլիսի 19-ի կանոնների համաձայն: Հայ ժողովուրդը նորից թեթև շունչ քաշեց, հասկացաւ, որ ինքը բոլորովին խորթ զաւակ չի մնալու ընդարձակ Ռուսաստանում և յիշեց այն սրբազան ոգևորութեան օրերը, երբ իւր նախնիք ռուսական զօրքերի կողքին կանգնած կուռում և յաղթանակում էին թշնամու դէմ՝ հաւասարապէս բաժանելով յաղթութեան փառքն ու ցնծութիւնը: Հայ ժողովուրդը ցնծագին աղաղակներով և ջերմ աղօթքով ողջունեց Կայսեր հրովարտակը և ոգևորութեամբ հանդիպեց իւր բազմավաստակ ծերունի Հայրապետին Թիֆլիզից վերադառնալիս: Սկսան փոքր աւփոքր յետ դարձնել Գալիցիների արսորած հոգևորականներին և աշխարհական հայերին Ռուսաստանի զանազան անկիւններից և հայ ժողովուրդը վշտի ծովում կրկին մի փոքր մխիթարուեց:

Այդ միջոցին յաջողութեամբ առաջ էին տարւում

խաղաղութեան բանակցութիւնները Միացեալ Նահանգների Պօրտամուտ քաղաքում: Վերջապէս Եպոնիան ընդունեց Ռուսաստանի առաջարկած պայմանները, հրաժարուեց պատերազմական տուգանքից, ստացաւ գերիշխանութիւնը Կորէյեայում, Կլանտունը՝ Պօրտ Արտուրով ու Դալնիով, Մանջուրական երկաթուղու հարաւային գիծը, Սախալին կղզու հարաւային մասը և խաղաղութեան դաշնագիրը արդէն օգոստոսի 16-ին ուրուագծած էր: Օգոստոսի 31-ին արդէն զինադադարի բանակցութիւններ սկսուեցին երկու թշնամի բանակների մէջ և սեպտեմբերի երեքին վերջ արուեց թշնամական բոլոր գործողութիւններին: Ահա այսպէս վերջացաւ ռուս-ճապոնական 19 ամսեայ արիւնահեղ պատերազմը, որը ձախորդութեանց մի երկար շարք էր Ռուսաստանի համար՝ շնորհիւ վերջին քսան և հինգ տարուայ յետադէմ ըէժիմի, պատերազմական թափերաքեմի հեռուորութեան, Մանջուրիայի տեղական ազգաբնակչութեան թշնամական տրամագրութեան և եպոնացոց աննման հայրենասիրութեան ու մտաւոր դարդացման:

Սեպտեմբերի սկզբին հրատարակուեց բարձրագոյն դպրոցների ինքնավարութեան վերաբերեալ օրէնքը, որով կարճուում էր, որ բարձրագոյն դպրոցների կեանքը պէտք է ստանայ սովորական խաղաղ ընթացքը, բայց հաշիւը սխալ էր՝ ստրուկ երկրում ազատ դպրոցն ապրել չէր կարող: Շնորհիւ մասամբ արտաքին անյաջողութեան, մասամբ էլ բիւրօկրատիայի հակառակութեան և ինքնակամ գործունէութեան ընդդէմ բարձրագոյն հրամանների, շրնորհիւ տարօրինակ դանդաղութեան և ռուսական (авось-ի) գուցէի, որի վրայ յոյս էին դրել գլուխներ կորցրած բիւրօկրատները, Ռուսաստանում ժողովրդական շարժումը քաղմաթիւ համագումարներից և տէնդային գործունէութիւնից յետոյ, լեռնացաւ նախ աշխատաւոր դասակարգերի և ինտէլիգէնցիայի տարերային շարժման և ապա երկրի քայքայուած տնտեսական կացութեան շնորհիւ: Վերջապէս հրատարակուեց հսկտեմբերի 17-ի հրովարտակը, որից

յետոյ Ռուսաստանը մտաւ սահմանադիր երկիրներէ շարքը: Դրանից առաջ լիակատար բաւարարութիւն տրուեց Յինդանդիային, որտեղ ժողովրդի յուզմունքը փոքր էր մնացել, որ ապստամբութեան փոխուէր:

Այդ միջոցին Պետերբուրգ էին հաւաքուած Ռուսաստանի դերեղմանափորները՝ Պօքէդոնոսցի, Մետրապօլիտ Վլադիմիր, գեներալ ադիւտանտ Բադդանովիչը և այլք, որոնք Վ. Լվովի խօսքով բոլշայա Մարսկայա փողոցի № 51 տանը ծրագրել էին այն վայրագութիւնները, որոնք տեղի ունեցան արդէն ազատ Ռուսաստանի համարեա բոլոր քաղաքներում հոկտեմբերի 18-ից և որոնց հետեանքն էր հրօնշարտի և Սևաստօպօլի նաւաստիների ապստամբութիւնը, սև ծովի նաւատորմիղի ոչնչացումը, շատ քաղաքներում զօրքի դժգոհութիւնը, որոնք յոգնեցան և զզուեցին հարադատների անմեղ արիւնը թափելուց և հրեշային խարէրայութիւնից: Այդ միջոցին Կովկասն ունեցաւ Բաքուի և Թիֆլիզի խուլիգանական վայրագութիւնները, Շուշուայ կոտորածն ու սոսկալի հրդեհը, Կանձակի և զիւղերի կոտորածը, Թիֆլիզի թուրք-հայկական ընդհարումը, Բաթումի կոտորածը Ղազախների ձեռքով, Նովորոսիսկի ապստամբութիւնը, Եկատերինոգարի, Ստաւրապօլի մեծամեծ և այլ մանրիկ դէպքերը: Բայց մի առ մի թուել այն բոլորը, ինչ որ անցաւ 1905 թուի ընթացքում, մի յօդուածով ընդգրկել մարդկային սվկիանոսի այն հսկայական փոթորիկը, որ տեղի ունեցաւ և դեռ ընդհանրեցնողների շնորհիւ շարունակուում է Վլադիվաստոկից սկսած մինչև Վիլնա և Արխանգելսկից սկսած մինչև Զուլֆա, դա անհնարին բան է, որովհետև Ռուսաստանը ամբողջ քառասուն տարի այնքան չի ապրել և գործել, որքան ապրեց և աշխատեց անցեալ 1905 թուականի ընթացքում, որը և փոթորկած յանձնում է այդ հսկայական երկիրը սոյն 1906 թուականին: Իրար շնորհաւորելով արիւնոտ թուականի վերջը և նորի սկիզբը՝ մաղթենք սիրելի ընթերցող, որ ջախջախուի եսական շահասէրների թունաւոր հիւրան և աղատութեան ու խա-

դադութեան արչալոյսը բացուի ընդարձակ Ռուսաստանի վրայ, որի ամենատանջուած զաւակներն ենք և մենք և որը դարերի ընթացքում սիրելի մայր էր բոլորիս համար՝ մինչև Գալիցիներէրի և Լօբանովների խելացնոր քաղաքահանութիւնն ու նրանց սերմանած որոմը, որը և այսուհետև մեզ համար կը մնայ նոյնը և ազատութեան, արդարութեան և հաւասարութեան սպեղանիով կը բուժի իւր ընտրելագոյն զաւակների արիւնածոր վէրքերը:

Ս. Տ. Վ. Մ.



ՓՐԿՁԻ ՇՆՈՒՆԴԸ

Աշխարհի փրկչի ծնուելու ժամին՝
Մի աստղ պայծառ ու նորանշան
Փայլում էր խիտ ջինջ աստղերի միջին,
Ամենքի ուշք, միտք դրաւում իրան:

Յանկասէր, հպարտ, բռնակալ մոգեր
Արքայորդու աստղ կարծեցին նրան.
Ուրախակցելու, տալու ընծաներ
Աշխարհի երեք ծայրերից եկան:

Արքունի շքեղ պալատի տեղակ՝
Բեթղեհէմից դուրս այր գտան մթին.
Այս այրի տխուր կամարների տակ՝
Պատսպարւում էր հովիւն հետ հօտին:

Այրի անկիւնում տեսան մի մանուկ.
Որրանք՝ մսուր խանձարուրը՝ յարդ.
Տեսան կուշ եկած մի մարդ խեղճ, ծերուկ,
Մի կին գեղեցիկ, քնքոյշ որպէս վարդ:

Չըկար արդ ու զարդ, չըկար ծիրանի,
Ոչ շքեղութիւն, ոչ փառք արքունի: